

նան ևս ունի մի անյարմարութիւն, որի վրայ կարեւոր է ուշադրութիւն դարձնել: Ինչպէս յայտնի է, գիւղացիները մեր կողմերում իրենց անասունները ամբողջ ձմեռը կերակրում են գլխաւորապէս յարդով, մեքենան կորստում է յարդը շատ անցումար կերպով, որ շատ կոշտ է լինում, ուստի և անասունները դժուարութեամբ են ուտում: Այսպիսի դէպքում պէտք է աշխատել մեքենան յարմարեցնել յարդը արորելու համար: Այս նպատակով ևս արդէն փորձեր են եղած, որ յաջողութիւն են խոստանում: Այսպիսով ուրեմն, եթէ կայի մեքենայի այս մի անյարմարութեան առաջն առնուելի ամէն բան վերջացած կարելի է համարել: Առ այժմ կարելի է այս խորհուրդը տալ մեքենայի կորսած յարդը խնդն պէտք է փոխել կաշում և քիչ ժամանակ կաշու ձեռքեր, արորել և կամ անասուններ մանածել, որոնք իրենց ոտքերով կիւսակիցնեն յարդը:

Կը շարունակուէ).

Գ. Ղ.

ՄԱՆՐԱԼՈՒՐԳ

Կայծակի խաղերը. — Աստղագէտ Կամիլ Ֆլամարիոն այսպիսի վերնագրով մի յօդուած է հրատարակել, որ հետաքրքրական տեղեկութիւններ է տալիս կայծակի առաջնացրած երևոյթների մասին: Անցեալ թուականի օգոստոսի 17-ին 30 մետր հեռաւորութիւնից կայծակը յափշտակել է մի երիտասարդի, որը միայն վայր ընկնելիս պատին գիպւելով վիրաւորել էր ծունկը. իսկ նոյն կայծակը երիտասարդից 20 մետր հեռաւորութեան վրայ սպանել էր երկու կով:

Սովորաբար կայծակը խփում է այն մարդոց, որոնք անձրեւ ժամանակ ուզում են ծառերի տակ պտտապարան գտնել. այսպէս ձ զինուոր, որոնք անձրեւից պաշտպանուում էին Լորենու տակ, կայծակնահար են լինում և մնում են այն դրութեան մէջ, ինչպէս որ կային. բայց երբ ուրիշները զիպան նրանց, իսկոյն մոխրի կոյտ դարձան, Կայծակը միշտ այդպիսի գոբախտ երևոյթներ չի առաջ բերում. երբեմն և զուարճալի խաղ է խաղում մարդկանց զխին. Վերջերս գիւղական խրճիթի մէջ կայծակը երկու գիւղացուց խլում է նրանց նախաճաշը՝ հացը, պանիրը, պտուղները, վայր ձգում նրանց շիշը, իսկ գիւղացիների զխին առատ յարդ է թափում: Մի

ճանապարհորդի կայծակը խփում է, բայց չի վնասում. ճանապարհորդը դրպանում ունէր երկու արծաթ և մէկ սկեայ դրամ: Երբ նա տուն է դառնում, տեսնում է, որ իւր սկեայ դրամը չկայ, իսկ նորա փոխարէն արծաթ է մնացել. Կայծակը կարծես կալուանական հոսանքով, սկեայ արծաթազօծել էր միւս երկու արծաթ դրամների շնորհիւ: Պատահել է, որ կայծակը հաշել է սկեայ և արծաթեայ ականջի օղեր, շղթաներ, մինչդեռ այդ դարդարանքները կրողն անվնաս է մնացել: Այս երևոյթը աւելի դարմանալի կը լինի, երբ նշատի ունենանք, որ սկեայ հալուում է 1 030, արծաթը 954, պղինձը 940 աստիճան տաքութեան մէջ, Մի անգամ կայծակն այրում է մի կնոջ գուլպաները. իսկ կինն անվնաս է մնում: Կայծակը երբեմն երևում է կըրակի գունտ դարձած. օրինակ, Բենէոնում (Իտալիա) մի անգամ սոսի ծառի վրայ այսպիսի մի գունտ երևաց, որ շարունակ մի ծիւղից միւսն էր թռչում: վերջապէս գետին ընկաւ և զլորուեց մի գիւղացու բակ, Գոմի դրան առաջ երկու երեսայ կային կանգնած. նոցանից մէկը հետաքրքրութեամբ ոտը դրեց գնտակի վրայ, որ յանկարծ պայթեց, ահագին զըղորդ հանելով ցնցեց տան պատերը և վայր ձգեց երեսներին, որ անվնաս մնացին, մինչդեռ գոմի մէջ կայծակը սպանել էր 14 գլուխ տաւար:

Պատահում է, որ կայծակէ ձեռնոցների մէջ ձեռքերը այրուում են, մինչդեռ ձեռնոցները մնում են անվնաս: Կայծակը մի լցրած հրացանի խփելով հալում է նրա մետաղեայ մասերը, իսկ վառողն և զնտակը մնում են անաղարտ:

Մի անգամ մի երեկոյթի դահլիճում կայծակը հանգցնում է բոլոր մոմի ճրագները և դահլիճը լցնում է խեղդող ամիսահոտով: Իսկ Լիոնի հիւպատոսարանում սրանից մի քանի տարի առաջ կայծակը վառել էր բոլոր ելեկտրական ճրագները:



ՅԱՒԵԼՈՒԱԾ

(ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ԴԻՍԵՆԻՑ)

(Նարոնակութիւն և վերջ)

Յաղագս անցից ոմանց, որ զկնի օծման մեծի Հայրապետիս նդել:

Արդ՝ զկնի օծման մեծի Հայրապետիս մերջի ծայրագոյն Պատրիարքութիւն ամենայն Հայոց՝ սա ըստ օրինի և ըստ բնական հարկի և սովորու-

Թեան նորանիստ Կաթողիկոսաց՝ ընդ ամենայն տեղիս առաջոց իւր զանգուանիկ օրհնութեան կոնգակս գրեաց՝ ծանուցանելով զորպիսութիւնս անցիկն և յամենեցունց ընկալաւ զշնորհաւորական և զհամահաճական մանսարս. նոյնպէս և ի մեծն Պոլիս գրեաց, բայց նոցին համահաճական թուղթըն և մանսարն երկար միջոցաւ յամեցաւ. որոյ արգելաւիժ պատճառն էր օժակից եղբայրն իւր և պատրիարքն մեծին Պոլսոյ Զաքարիա արքեպիսկոպոսն, Բանդի՝ ի ժամանակս լուսահոգի Սիմէոն Կաթողիկոսին, որ ի նմանէ կացուցեալ էր երկիցս ծայրագոյն նուիրակ մեծին Պոլսոյ, և անդ. պատրիարքական պատուոյ ևս էր հանդիպեալ նպատուութեամբ նորին, և ժամանակ ինչ հարազատութեամբ և հնազանդութեամբ ծառայէր—«մամանակ ինչ»—բայց յետոյ սակս խուռն ինչ իրաց և իրականութեանց զիւրք ինչ ապստամբութիւն՝ ինքնազխուրթիւն և անպատուութիւն ցոյց ետ լուսահոգւոյն զթուղթն ոչ գրէր առ նա, խրատուց և գրեցելոցն նորին ոչ լսէր և ոչ պատասխանելոյ արժանի համարէր, վասն որոյ ընդ միմեանս ռնացեալ էին, և ի ձեռն արտառու բանից և պէսպէս թղթոց ըզմիմանս վերաւորէին, մինչ զի լուսահոգին կամեցաւ վրէժնիցիւր նմա լինել, բայց ցաւն հիւանդութեան օր ըստ օրէ զօրացեալ և երկարաձգեալ հաճեաւ ի Քրիստոս, և մնաց նոյն տառութեան և խռովութեան կրճիմն ի ժամանակս նորոգ սըրբազանիս, եւ թէպէտ անյիշաչար և խաղաղասէր Հայրապետն մեր չունէր զատելութիւն ինչ—«ինչ»—ընդ նմա, զի օժակից և սիրական եղբայր իւր էր և բաց ի բարերարութենէ զվատութիւն ինչ ոչ էր արարեալ, այլ մինչ զնա ի մեծն Պոլիս Պատրիարք էին կարգեալ, սիրառատ սրբազանն ի Զմիւռին ի յառաջնորդութեան իւրում լսելով զայն, զմեծահանգէս խրախճանութիւնս էր արարեալ, և ըստ արժանւոյն զընծայս ևս յղեալ առ պատրիարքըն ի շնորհաւորութիւն. նաև՝ յատկապէս վասն տեսութեան և սիրոյ նորին ի վերադառնալն ի Զմիւռնոյ ի սուրբ Աթոռս ի վերայ մեծին Պոլսոյ էր եկեալ առ ի տեսանել զեղբայրն իւր, Իսկ նա ի նստիլն սուրբ յԱթոռ Հայրապետութեան, ի յառաջին ամին ընդգիմութիւն և վատարարութիւն ինչ ոչ մնաց, զոր ոչ արար, զորոց գրեւ և ծանուցանելն աւելորդ լիմն է. զի թէպէտ զկարկատուն պատճառս յօգնելով կամէր անընդունելի առնել, սակայն՝ ըստ որում ճշմարտութիւն յաղթող է, ոչինչ կերպիւ կարաց զանպատուութիւն և զվնաս ինչ հասուցանել, այլ ինքն ըստ արդար իրաւանցն Աստուծոյ տարապարտ վնասուց մեծաց և անպատուութեանց հանդիպեալ՝ արքունական հրամանաւ ի պատրիարքական իշխանութենէ հանեալ ի Պոլսոյ վտարեցաւ, և բազում զբամալատնութեամբ զինի քանեաց ամսոց վերստին հաստատե-

ցաւ ի պատրիարքական իշխանութիւն իւր, եւ մինչդեռ ի Պոլսաւ ի յաքսորս կայր, օրհնեալ իշխանապետ, իշխանք և բոլոր ժողովուրդքն մեծին Պոլսոյ—«(հանդերձ խեղանց նորոգ եղեալ Պատրիարք Բաղսացի Յովաննէս)»—զարքունական պէրաթս և զփերմանս և զհամահաճական—«մամանա»—բազմակնիք մանսար առաքեալ՝ շնորհաւորեցին ըզսրբազնասուրբ և զծայրագոյն Հայրապետութիւն սրբութեան նորին ի վերայ ամենայն Հայոց, որդիական խոնարհութեամբ և բազմաւ ուրախութեամբ, և ինքն Պատրիարքն Զաքարիա այնուհետեւ սկսաւ զղջնալ ի յանպատեհ արարմանցն իւրոց և յաղթեցեալ ի յանյիշաչարութենէ և ի հեղուցիւնէ Տեառն մեծի սրբազանին, վառեցաւ ընդ նմա ի յիղձ հոգեւոր, և քանի մեծաւ հաստատեցաւ ի յառաջին հարազատական սէրն:



Եաղազս հիացման արժանի շինութեանց եւ նորոգութեանցն սրբոյ Աթոռոյս, զորս արար եւ աննէ օր ըստ օրէ ըազմաշխատ եւ սրբազան Հայրապետս մեր ի ժամանակս իւր, զայնս կարգաւ զրեցուք ի ներքոյ—«Կարգ»—

Հայրապէս ի նստիլն իւր յԱթոռ սուրբ Լուսաւորչին սկսաւ ըզձափառ սիրով և մեծատենչ փափագանք ձեռն արկանել ի շինութիւն և ի նորոգութիւն ներքոյ և արտաքոյ Աստուածակերտի և Քրիստոսաիջի Տաճարին, առ ի պայծառազարդել և ի շքեղացուցանել, Գիտել արժան է աստ, զի թէպէտ յաւուրս Տեառն Աստուածատրոյ հոգելոյս Հայրապետին, և ի ժամանակս նախափրկութեան կալուածոյն զյղբաշիջ թագաւորաց, ի մէջ Աստուածեան տաճարիս շինեցան բոլոր մարմարոնեայ հրաշակերտ շինուածքն և ծաղկեցան, և չորեքեան խախտեալ սիւնքն նորոգեցան, և տանիքն և յատակն սաւեցան, և մէջն սրբոյ տաճարիս բռամբ սպիտակեցան և պատկերազրեցան ի տեղիս տեղիս, և անհեթեթ ծաղկեցան հոգարարձութեամբ նոյն հոգելոյս Տեառն Աստուածատրոյ Հայրապետին ի ՌճԴԻ թուին, որպէս գրի ի պատմութիւնս նորին երանելոյ, ի գաւազանագրքի աստ-սակայն 60 և այլ աւելի ամբ անցանելով, յայսքան միջոցում սրբոյ տաճարի տանեաց բոլոր սալքն և քարիւքն մաշեցեալք և քայքայեալք էին և տեղի տուեալ մաից անձրեաց, և ի հոսիլ յորդարուղիս անձրեաց և հեղեղաց իսկոյն ի ներքս մտանելով, զբռածեփս և զծաղկունսն գիջացուցա-

նեղով և եղծանելով ի վայր թափելն: այնքան՝ մինչ զի ի տեղիս տեղիս ի կաթիլ անձրևաց յորդագունից ի յատակս եկեղեցւոյն զանօթս պղնձեղէնս դնէին ի պարագրուծիւն անձրևաջուրց (զոր աչօք մերօք տեսաք): Զայս տեսանելով Տեառն Արմէնի Հոգեւոյս Աթուղիկոսի ծնողի մերոյ, նախապէս մեծածախ գրամագնացութեամբ զբոլոր տանիսն սրբոյ տաճարին դիւրահասար մեքենայիւք (այսինքն՝ զգերան մի պնդապէս ի վերայ տանեացն իրրև զշարխ ամրացուցանելով, և զքառանկիւնի փոկակապ թաթ մի ի ծայր գերանոյն կախելով ճախարակաւ, և զառու փոկին կամ պարանոյն ի լուծ երկուց եղանց կապելն և ուղղակի զեղինսն քօղ մի հանդէպ գերանին վարէր: և թաթ կըշտոցն ելանելով և իջանելով զհասցոյն քարինսն ի վայր բերէր: և զնոր քարինսն ի վեր տանէր) ևս խորտեալ քարամբ և կրամածիւք ամրապէս սալել ետ: նաև՝ զերկոսին ձախակողման դասուց առաջին և յետին խախտեալ սիւնսն մինչև ի վերին կամարսն հաստատապէս վերանորոգել ետ ի ձեռն քաջաւարժ ճարտարապետի Սահակ կոչեցելոյ: և մինչ կամէր երանելին զմնացեալսն ևս նորոգել, անյաջողութիւնք և պէս պէս նեղութիւնք: և մանաւանդ ծանրագոյն վիշտք և հիւանդութիւնք վերաժամանեալ արգելին: և վերջապէս վասն օրհասին կանխելոյ չուեաց առ մշտաբաղձալին իւր Քրիստոս: և — (զարմն) — խորհուրդն մընաց անկատար: Իսկ ի յաջորդելն զկնի նորին հոգեւորտի Հայրապետին մերոյ Տեառն Առկասու սրբազան Աթուղիկոսին: Աստուծով սկսաւ նա զսիրտ Զորարարէի ստանալ, և առատատենչ սիրով վառել ի սէր և ի շինութիւն և ի վերանորոգութիւն սրբոյ Քրիստոսահիմն տաճարին: Զնանարկեալ նախապէս զմնացեալ զերկոսին խախտեցեալ և բեկբեկեալ սիւնսն աջակողման դասուն, ուր երկոցին կաթուղիկոսարանք են շինեցուցանել ի հիմանց անտի և նորոգել հանդերձ իւրեանց քառակուսի վերնակամարօքն, մեծամեծ և անփրտելի ընտիր ընտիր քարամբ կարմրագունիւք լաւապէս կոփակոկ տաշեցելովք: Զիթաշաղախ և պնդակազմ լոկոնիւք — (մեծամեծ) — ամրապահ և հաստահեղոյս երկաթեայ կապիչս բաղումս զետեղելով ի մէջ սեանցն առ ի ըմբռնել զքարինս ընդ միմեանս: և կրամածիւք պնդել և քառակուսի հաւասարաչապ ձախակողմէր զարդարել ի հիացումս տեսողաց: և այսօրիկ ձեռամբ քաջարհետ ճարտարապետի Գասպար կոչեցելոյ: Գիտելի է և այս, զի զչորեւսին սիւնսն Աստուածեան տաճարին թէպէտ ի հիմանէ շինել գրեցաք, որպէս և է իսկ՝ որքան առ շրջապատ քարինսն, որք բեկբեկեալ և փոշիացեալ իսկ էին, բայց շնորհիւն ճաղատ ճարտարապետին Քրիստոսի և աղօթիւք սրբոյ Առկասուրդին մերոյ հոծախիտ և թանձրախուռն խճողն

(որ է ըստխառն) կարի ամրագոյն և պնդակազմ էր: մինչ զի յօժարակամ եթէ մուրճ կամ ուռն և կամ երկաթեայ գործիք հպիր վասն սերտութեան և ամրողջութեան զձայնս արձակէր: և տեսողքն զարմացեալք զփառս տային պահպանողն Աստուծոյ:

Եւ յետ երկուց սեանցն իւրակերտից՝ սկսաւ զբոլոր եկեղեցւոյ վերնակառոյց կամարաց և կամարամիջաց և սեանց և այլ շրջապատ որմոց եղծեալ և ապականեալ և ի մոխիր դարձեալ հնագոյն բաձեփսն: այսինքն դաճնս, իսպառ քակել տալ, և ոչ թողուլ նշմարանք ինչ հնագոյն դալից և եղծեալ անհեթեթ ծաղկանշից, սկսեալ ի մեծ կաթուղիկէի գմբէթամէջ կիւրոնէն մինչև ի ստորին յատակն եկեղեցւոյն՝ հանդերձ ամենայն խորանօք և բեմիւքն, բայց միայն զքանի մի հնագոյն պատկերս մնացին: զայնս ևս ի բաց առին ի տեղեանց առ ի վերանորոգել: Արդ՝ մինչ զբոլոր եկեղեցւոյ որմոց և առաստաղաց և չորեւսին սեանց և կամարաց բաձեփսն, այսինքն սվաղսն, սկսան վարպետքն քակել, յայնժամ երևեցան ի վաղջուց ժամանակաց քակեցեալ տեղիքն և հնագոյն բեկբեկեալ և ջախջախեալ քարինքն և երկկալի փոսութիւնքն, մանաւանդ ի յետին դասուց երկուքին կամարքն, որք իսպառ փշրեցեալք էին և մեծամեծ քարինքն ի տեղեաց իւրեանց ի բաց ուտեցեալք, զորս ի քակելն մեծ ճարտարապետն զարհուրեալ վասն երկկալի մահուան՝ զլուսարար Մարկոս եպիսկոպոսն առ սրբազանն էր յղեալ: առ ի ծանուցանել նմա զվտանգաւորութիւն կամարացն, զի մեծ կաթուղիկէի գմբէթն ի վերայ այնց չորից կամարացն էր շինեցեալ, յորոյ ծանրութեանն էին բեկոտեալք: Իբրև լուաւ սրբազանն (զերկիւզալի և) զտրտմառիթ լուրն զայն, ինքնին յարուցեալ դնաց ի տաճարն, և ելեալ ի գլուխ սանդղդոյն և ետես՝ զերկիւզալի տեղինսն իւրով աստուածազոյցիկ հանձարովն զգիւրագոյն հնար իմնեցոյց ճարտարապետին առ ի զիւրաքանչիւր քարինսն փայտիւք և այլ մեքենայիւք նախապնդել, և միակ միակ չփշրեալ քարինսն բեկոտեալ հանել, և ի տեղին զնոր պնդագոյն և ընտիր ընտիր կամարաքարինս շարել լոկոնիւք և երկաթապէս առնել: նմանապէս և զայլ տեղինսն, որք ի ժամանակս Տեառն Աստուածատրոյ Հայրապետին, ի վերանորոգելն զմէջ եկեղեցւոյն, վասն վրդովմանց և պատերազմացն որ ի մէջ Պարսից և Տաճկաց՝ յայնմ սասանման և յերկուղալի ժամանակին անձեռնահաս լեալ ի շրջապատս սեանց և այլ որմոց՝ ի տեղի քարանց, ի վաղջուց քակեցեալ և մաշեցեալ տեղինս փայտիւք և դիւրափուլ կղմնգերբք էին կարկատեալք և երեսն բռեալք, որոց ըզփայտեայ կոտորն տեսաք աչօք մերովք: այնքիկ ևս քարամբք շինեցան պնդապէս և ընդ հնոյն

յարմարեցան: Արդ՝ մինչ այսպէս տաժանակիր աշխատութեամբ զամենայն քարեղէն բեկեղեկեալ տեղիսն և զհնազոյն խախտեալսն նորոգել ետ: ապա այնուհետեւ զքաջահմուտ բռածեփ, այսինքն զքաճկազ վարպետս բերել ետ: և զԱստուածա-կերտ տաճարս բոլորպէս ի յատակէ որմոց մինչև միջակէտն մեծ դմբէթին հանդերձ բոլոր կամարոք և կամարամիջօք սեամբք և խորանօք արծաթափայլ սպիտակութեամբ բռածեփս առնել ետ:

Յաղաքս ծաղկեցուցմանց եւ հիանալի շքեղազարդութեանց եւ նկարակերտութեանց եւ զանազան պատկերազրութեանցն Բրիտոն-սահման մեծի տաճարին սրբոյ Էջմիածնի ի նոյնոյ վերապետէն:

Արդ՝ մինչ նորոգեցան խախտեցեալ սիւնք և կամարք և այլ հնութիւնքն սրբոյ Աստուածեան տաճարին և բռածեփ եղեալ ձիւնափայլ և արծաթանիշ սպիտակացան ի ներքուստ անտի բոլորապէս: Ապա այնուհետեւ զծաղկաբարութեան և ըզպատկերազորութեան պատրաստութիւնս տեսանելով՝ ի հնաւոր տեղեաց և ի հոյակապ մեծաւուն քաղաքաց զգոյնագոյն, զերանգ երանգ և զղազին զեղորայս և զոսկեայ վարաղս մարուսս ի յետուզոյ ձեռամբ հարազատ նուիրակաց արհիագունից նախապատրաստել հոգալ և բերել ետ: Եւ ապա ամենայն գովութեանց արժանի և յոյժ անուանի Հօռութեցի գեղեցկանկար և քաջալարժ Յովնաթանեան Յովնաթան շնորհալի պատկերահան և ծաղկարար վարպետս որ ի Թիֆլիզ բնակէր ի մեծազօր արքայէն Վրաց խնդրեալ՝ բերել ետ ի սուրբ Աթոռս աշակերտօքն հանգերձ, զորս հայրական սիրով և պատուով մեծաւ ընկալեալ և զոճիկս առատս լիաձեռնութեամբ շնորհեալ և զպատշաճաւոր յարկս զարդարեալս ի բնակութիւն յոցա տուեալ՝ հրամայեաց զզանազան և զխորհրդաւոր օրինակս պէսպէսս և գեղեցկաառնելս ծաղկանց նախանկարել ի տեսութիւն և ի հաւանութիւնքն, առ ի ծաղկազարդել զբոլոր Աստուածա-կառոյց և երկնաման տաճարն հրաշալի: Այլ և զերանս մեծամեծս ստուարս և երկայնաձիգս և զտախտակս նոյնպիսիս ի մայր փայտից՝ տաժանակիր աշխատութեամբ և զրամափառնութեամբ նախապատրաստեալ էր վասն իսկեալայից և այլ մեքենայից ի պէտս նորոգութեան Աստուածեան տաճարին, որովք և նորոգեալ և սպիտակացեալ էր բոլոր եկեղեցին (որպէս և գրեցաք ի վերոյ): Նոյն

յարմարտեսակ փայտիք և գերանօքն հրամայեաց խորանհեմ և հնարագէտ հիւսանց մերոց ճարտարաց Պետրոս և Գարրիէլ կոչեցելոց զտաճարն լուսակիր իսկեալայակապ—Եւ—միքենայապատ և տախտակաշար առնել, ըստ յարմարութեան և ըստ պատշաճաւորութեան իւրաքանչիւր կամարաց խորանաց և առաստաղից՝ ի գիւրութիւն և ի ձեռնահասութիւն ծաղկաբարաց, և այս ոչ եթէ մի անգամ այլ բազում անգամ ըստ պիտոյից և ըստ փոփոխման իւրաքանչիւր տեղեաց, և հիւսքն մեր քաջալարժ գոլով՝ պնդեալով յօրինէին: և այնուհետեւ Աստուծով զօրացեալ Յովնաթան շնորհալին աներկիւղութեամբ զձեռն ի գործ արկանելով նախապէս զբոլոր կոչեցեալ օրինակն և նկարագիրն ցուցանէր թեառն մերոյ մեծի սիրափառ սրբազանին և ըստ հաճութեան և հաւանութեան նորին տաջեալ ոսկեճաճանչ փայլմամբ և գեղադէ յօրինմամբ, գեղեցիկ և հիանալի տեսեալս ծաղկազարդէր: և ինքն սիրատափ սրբազանն ոչ զազարէր յերթեմեկս առնելոյ յԱստուածահրաշ տաճարն, և գրեթէ զչափ և զձեռն ոսկեփայլ ծաղկանց զանազան գեղեցիկեցոց և խորհրդաւոր պատկերաց Աստուածազգեցիկ հանճարովն և նրբանկատ իմաստութեամբն իւրով ինքն յօրինէր ի զարմացումն տեսողայ: ի ձեռն հանճարեղ խրատուց և պատուիրանաց իւրոց հանապազօրեականաց, թէ յօյտնի և թէ ի ծածուկ—անխապէս զլուսակազմ եւ գիտալից 12 կամարամիջաց առաստաղսն ոսկեալ բիրդալմբ այսինքն գեղալ ոսկեալ վարալօք եւստղեաց—նախապէս զերկրոտասան լուսակազմ և խաշանիշ կամարամիջաց առաստաղսն և զնոցին միջածիրսն, կեօպէկ և պօրտ կոչեցեալ, սկսաւ ոսկեծոյլ նկարիք գեղաճաճանչ և բոլորակաձեռն միջակէտս նկարել, հանպոյն ճառազայթարձակ արեգական, և ոսկեայ թիթեղամբ, այսինքն եւստղեայ լվարաղաւ կապուտակ լէճվերթիւք և այլ պայծառագոյն ծաղկօք՝ զարդարեալ և զանազան ձեռով նկարակերտել, և իւրաքանչիւր կամարակապ առաստաղաց միջածիրն ընդ իւր հանդիպակայ միջածիրն, համեմատ համազոյգ և միաչափ յօրինեալ, այսինքն՝ աջակողման առաջին դասն ընդ ձախակողման առաջին դասուն, միջինն ընդ միջինն, և վերջինն ընդ վերջինն՝ զոյգ զոյգ հանդէպ միմեանց, ոսկեփայլ ճառազայթիւք երկրորդապէս զպատարագամտոյց սրբազնասուրբ բոլոր խորանսն զարդարել ետ ոսկեզարդ ծաղկամբք վերնակառոյց կամարօք—Այլ զածիրս—բոլորակաձեռն ոսկեկազմ և գեղաճաճանչ միջածիրս, որմովք և առաստաղօք, հանդերձ պայծառափայլ յօրինմամբ՝ հիանալի տեսողաց, Երրորդապէս զ12 լուսակառոյց և երկնաման ազնիւ կամարաց մէջսն և ճակատսն և կողմունսն, հանդերձ չորիւք երկնաբերձ սեամբքն թէ որպէս ոսկիաձողլ նշուղիւք և գեղաճաճանչ ճառազայթիւք և պա

ծառատեսիլ ծաղկօք զանազանիւք զարգարեաց, և ոսկեփայլ գեղեցկութեամբ հիասրաշ յօրինուածով պճնապաճոյճ պայծառազարդեաց, զուգահաւասար իւրաքանչիւր կամարքն և ճակատքն և կողմունքն հանդէպ միմեանց համանման ընկեր առ ընկեր համարադաս իրերաց՝ խորան ընդ խորանաց, ծաղիկ ընդ ծաղկանց, հաշիայք ընդ հաշիայից, և մանաւանդ զրօր մէջս և զառաստաղս մեծի լուսակազմ և երկնահանգոյն կաթուղիկէին և բարձրաբերձ գմբէթին— քե՛ս ո՛րպէս— ի միջոճէն սկսեալ մինչև ցմբենկառոյց կամարազուլտն և անտի սկսեալ մինչև ցստորոտն չորից սեանց, այսինքն ի յատակն հանդերձ սիւնայանկիւնիւքն, լծէ ո՛րպէս շքնադատեսիլ և հիանալի յօրինուածովք կերպակերպ խորհրդաւոր ձեօք— «Իմանալի» — նրատեսիլ զանազան ծաղկօք և ոսկեճաճանշ բոլորակօք, շքեղ և զարմանալի երանգ. երանգ արփիափայլ փառօք ծաղկազարդեալ վայելչացոյց, զայնցանէ մանրամասնաբար անհնարին է մեզ ճառել աստ. «Բանդի» Աստուանակար և լուսազարդ տաճարն ըստ Աստուածային տեսլանն և մեծախորհուրդ գերազանցութեան և խաչանիշ ձևակերպութեան, լծեպէտ որպէս զսիւն լուսեղէն և երկին երկնի ի յերկրի վայելչապէս գեղով հրաշակառոյց յօրինմամբ քան զամենայն գեղեցիկս գեղեցկագոյն է ըստ ներքին և ըստ արտաքին տեսութեան. սակայն նոյնն մինչ ոսկենկար պայծառազարդեցաւ, և ևս առաւել որպէս զհրեղէն և զլուսատիպ սիւն գերափայլեցաւ հանդերձ ամենայն առաստաղօք և կամարովք, խորանօք և— «ձեղնօք» — սեամբք, և շրջապատ որմովք, Այլ և՛ հաւասարաչափ սեանց միջին խաւրճասցն յորս ոռք կամարացն են եղեալք, ըստ բարձրութեան չափուց— «նոցիմ», — հինգ և կամ վեց կանգնոց ի վերայ շրջապատ բոլոր որմոց որ ի մէջ սրբոյ տաճարին գօտի գոյր հաստատեցեալ, որ ի բարբառս այլազգեաց թախչայ և կամ չինիքեար կոչի, զայն շրջաբոլոր գօտին զուտ ոսկեայ լիթիթմամբ և մաքուր լէճուէրդիւք ոսկեղօծ ծաղկել ետ պայծառափայլ տեսլեամբք, և որոց ի վեր և ի վայր զմեծամեծ ծառս և ծաղիկս վայելչագեղս և վարդափթիթս կազմել հրամայեաց, հանդերձ նոճի ծառովք կանաչագիւղիք սէլվի կոչեցելովք:

Այլ և ի ճակատս չորից լուսակառոյց սեանց ի ներքոյ վերնախարսխաց բարձրադիտակաց և միջնախարսխաց սալաթոռ կոչեցելոց իւրաքանչիւր սեանց քառանկիւնից չորից ճակատուց զոյգ զոյգ — «ի վեր», — և միակ միակ զհրաշագեղ պատկերս Տէրունական և տնօրինական՝ զսերօրեցի, զբրորէից և զառաքելոց և զայլ սրբոց, ոսկեղարօք և գեղաղէշս խորհրդաբար և վայելչապէս նկարագրել և շքեղազարդել ետ ի վերայ կտաւոց, և ի ճակատս սեանց և— «ուրմոց» — սեղանոց, խորանաց և

շրջաբոլոր որմոց և առաստաղաց զետեղել ետ. և զոմանս ի վերայ որմոց պատկերազրեցոյց, զարմանակերտ և հրաշատեսիլ յօրինմամբ և ոսկեղօծ փայլմամբ, ըստ ընդունելութեան և ըստ աւանդութեան, ըստ ծիսի և ըստ վայելչութեան Հայաստանեայցս ուղղափառ եկեղեցւոյ, որք լինին ընդ ամէնն թուով իրեւ 120 և այլ աւելիք, որք էին պատկերք Տէրունականաց, տնօրինականաց, հրեշտակաց, առաքելոց երկոտասանից, մարգարէից, հայրապետաց, վարդապետաց, ճգնաւորաց, կուսանաց, թագաւորաց, ղինուորաց և գերահաշակ մարտիրոսաց հայկասեօից. զորս ըստ մեծի մասին նոր ի նորոյ ըստ ըղձալի և սիրալառ տնէշանցն և ըստ Աստուածաղբեցիկ և նրբանկատ հանճարայն պատկերազրեւ և յօրինել ետ, և զոմանս որք հնացեալք և անգեղացեալք էին, նորոգեալ պայծառացոյց:

Այլ և՛ զտեղին իջման Բանին Աստուծոյ և զհրաշակերտ մարմարոնեայ գմբէթն որպէս սիւն — «լուսնդին» — հրեղէն և խորան լուսեղէն, որ ի կեդրոնի, այսինքն ի միջակիտի Աստուածեան տաճարին հրաշակերտեալ է, զայն ևս նոր ի նորոյ վերջստին ներքոյ և արտաքոյ պատկերօք և ոսկեղօծ ծաղկօք և երանգ երանգ գունով շքեղազարդել ետ — «(նոյնպէս եւ երեւ)» — հիանալի տեսողաց, և այսպէս մինչև ցհինգ և վեց ամս Աստուածակերտ և երկնանման տաճարն ի միջակիտէ մեծ գմբէթին սկսեալ մինչև ցստորոտս սեանց և բոլոր որմոցն հանդերձ խորանօք և սեղանովք, բեմիւք և նոցին աստիճանօք ծաղկազարդեալ և պատկերազրեալ պայծառացոյց երկնաքառակ և եղեմասարաս յօրինմամբ, նաև՝ զդրունն նոյնոյ տաճարին արտաքին կողմամբք հանդերձ առաստաղան մեծի և հրաշակերտի զանկակատան, որ պէս պէս ծաղկամբք և զանազան կենդանեաց և թռչնոց պատկերօք քանդակագործեցեալ և նկարակերտեալ է, զայնս գունագոյն գեղովք ծաղկափայլ շքեղազարդեցոյց և խորհրդաւոր պատկերս ևս ի յառաստաղս գրանցն նկարագրել ետ, ի վայելչութիւն, ի յուրախութիւն, ի բերկրասրտութիւն և ի պարծանս աղղին իւրոյ Հայոց մեծաց, զոր Տէր Աստուած վայելել տացէ և հաստատուն պահեցէ մինչև ցմիւս անգամ գալուստն իւր: Ամէն:

Այլ և՛ ի զարդ և ի պայծառութիւն տնօրինականաց և տէրունականաց տօնից և թափօրաց, զամենայն խաչմառնս, որք վասն վաղեմի լինելոյն հնացեալք և անպիտանացեալք էին, լծէ մեծամեծքն և լծէ փոքունքն, զայնս նոր ի նորոյ պայծառապէս նկարակերտել և շքեղազարդել և գունագոյն կերպսեօք զարգարել ետ ի վայելչութիւն հոգեւոր հանդիսից, որք էին թուով:

